



Ուստի խոնարհարար խնդրեմ ի խժբագրութենէդ Արարատ Ամսագրոյ զետեղել եւ զայս յէջս պատուական Արարատիդ ի լուր Ազգայնոց:

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԵՅԵԱՆԵՑ.

Ի 14 - և Դեկտեմբերի 1877 ամի,

**Ի Գ. Մ. Գ. Ե. Ե.**

Ի ՆՈՐ - ՆԱԽԻՉԵՒԱՆԷ՛.

**ԽճԻՆՈՒՄԻՆԻ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.**

Բարեպաշտ պարոն Կարապետն Շիրթեանց ի կենդանութեան իւրում ըստ յորդրանաց իմոց կտակաւ աւանդեալ էր յօղուտ եւ ի վերանորոգութիւն Եփսական Հոգեւոր Գպրոցի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ քաղաքիս զվեց հարիւր (600) ուրբիս արծ. եւ որովհետեւ շինուածք զգրոցին զոլով հնացեալ եւ լայքայեալ եւ արժանի վերանորոգութեան, ուստի համաձայն խորհրդոյ Հոգարարձութեան վերանորոգեցաւ շինուածք զգրոցին վայելուչ եւ յարմարաւոր եղանակաւ ի գումարաց հանգուցեալ Շիրթեանց. եւ ապա յաւուր օրհնութեան Գպրոցի պատարագ մատուցաւ. եւ զկնի սրբոյ պատարագի մեծաւ հանդիսիւ պաշտօն կատարեցաւ յեկեղեցւոջ վասն հոգւոյ հանգուցեալ Կարապետի Շիրթեանց, ուր եւ ներկայ գտաւ Տեսուչն ծխական զգրոցաց քաղաքիս Բարեշնորհ Արիստակէս Վարդապետն Գաւթեանց:

Թէպէտեւ հանգուցեալն ոչ էր ուսումնական անձն, եւ ոչ եւս ամենահարուստ ոմն, սակայն ունելով ազնիւ հոգի եւ ազգասէր բնաւորութիւն, նըւերեալ էր բաժին ի կայից իւրոց այսպիսի ազգօգուտ գործոց:

Վասն որոյ զովելով զովեմ սոյն օրինակ ազգօգուտ գործքը հանգուցեալ Մեծարդոյ Կարապետի Շիրթեանց, միանգամայն եւ բարեմաղթեմ առ բարձրեալն Աստուած, զի զհոգի նորա հանգուցէ ի լոյս երեսաց իւրոց:

Տար Աստուած, զի յարգելի ժողովրդականք մեր նախանձաւորք լինէին այսօրինակ ազգաշահ գործք ի պարծանա եւ ի միխթարութիւն Ազգիս կարօտելոյ:

Յ. Բ. Ս.

1878 Դեկտ. 20.

**Ի Նոր - Նախիջևան.**

**Յիշատակն բարեպաշտի օրհնութեամբ եղիցի:**

Հեռագայ արձագանքը Աստրախանու Գեր. Առաջնորդին խորին ուշադրութեան յանձնելով՝ կյուսամբ որ Նորին Գերապատուութիւնը կիփութայ պէտք եղածը հոգալ եւ տնօրինել, միանգամայն կարեւոր բացատրութեամբք հաղորդել տալ ի տեղեկութիւն մերազնէից:

Ուրիշ պատեհ առթիւ կրկին կտեսնուիմք:

**ԱՐՁԱԳԱՆՔ ԱԺՏԷՐԻՄԱՆԷ՛.**

Աժտերխան քաղաքի մէջ կան յետագայ Ուսումնարանները: Երկուց սեռից թեմական Հայոց Հոգեւոր Գպրոցներ, Աղաբաբեան Հայոց գաւառային ուսումնարան եւ ծխական արքունական Հայոց զգրոց՝ որ Աղաբաբեան ուսումնարանի պատրաստական դասարանն է համարվում: Սոցա մէջ Հայոց լեզուն պարտադիր առարկայ է համարվում, բայց թէ Հայոց լեզուի պարոն ուսուցիչները ինչպէս են աւանդում այս նուիրական լեզուի դիտութիւնքը՝ թողնում եմ իրենց խղճին. ճշմարիտ պէտք է ասել՝ որ Աժտերխան քաղաքը բարեհուշակ գիտնական Սերովրէ Վարժապետ Պատկանեանցի մահից յետոյ, չգիտեմ որոնց